



Ագդարարույթեան Trumpet's Sound **փող**

49-ԲԴ ՏԱՐԻ, ԱԻՍՏՐԱԼԻԱ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգետր քերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումճեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Ինծի համար ո՞վ կ'ըսեք թե եմ	3
<i>Հովիւ Հրաչ Գույումճեան</i>	
Յաւերժացուցե՛ք պահը	5
<i>Ռէքս Տիրլալ</i>	
Եթե հիմա գար Յիսուս	7
<i>Քաղուած</i>	
Ղովտի ըստրութիւնը	8
<i>Տոն Սրորմըր</i>	
Աստուծոյ արդարութիւնը	11
<i>Պատր. Փոյ Հայրօսրեան</i>	
Փոխարինուած խաչը	14
<i>Քաղուած</i>	
Արեւշատ գիւղը	15
<i>Հովիւ Հրաչ Գույումճեան</i>	

Կազմի նկարը՝ հայկական հին կուժ, ACM 2017թ.

ACM-ի աղօթքի սիւթեր

- Տերօջը շնորհակալութիւն կը յայտնենք ACM-ի վերջին 20 տարիներու եւ Աւետարանի միջոցով շատերու փրկութեան համար:
- Շնորհակալութիւն կը յայտնենք Իրեն «Անկիւնաքար» շէնքի եւ «Շնորհքի կենդրոն»-ի համար:
- Շնորհակալութիւն կը յայտնենք մեր գործընկերներուն՝ Աշոտի և Դասմիկի, Վաչէի ու Մանուշակի, Մարտունիի ու Անժելայի եւ Անիի համար:
- Կը խնդրենք շարունակել ձեր աղօթքները 21 հիւանդ մարդկանց համար, ովքեր բժշկական օգնութեան կարիք ունին:
- Աղօթե՛ք Զայաստանին տրամադրուող 20-րդ ուղեբեռի ճամբու դնելու անհրաժեշտ դրամական միջոցներուն համար:
- Աղօթե՛ք ծննանը վառելափայտի եւ Սուրբ ծնունդի նուէրներ պատրաստելու միջոցներուն համար: Ձեր աջակցութիւնը շատ անհրաժեշտ է:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ

«Ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ» հարցը Տէր Յիսուսի Իր աշակերտներուն տուած հարցերէն մէկն է: Կը սիրեմ Պետրոսի անմիջական, առանց կասկածի ու վարանումի արձագանքը. ան ըսաւ. «Դուն ես Քրիստոսը» (Մարկ. 8:29): Քրիստոսը եբրայերէն Մեսիա բառի Յունարէն տարբերակն է: Հայերէն կը նշանակէ՝ Օծեալ: Պետրոսը գիտակցեց Տէր Յիսուսի մեծութիւնը:

Հարցը թերեւս այսօր նոյնպէս կը հնչուի. «Ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Մեր կեանքին մէջ բոլորս գոնէ մէկ անգամ պէտք է պատասխանենք այս հարցին, անկախ երիտասարդ ենք թէ ծեր, հիւանդ թէ առողջ, աղքատ թէ հարուստ, կամ գուցէ հնարատր է, մեր մահուան անկողնին վրայ: Այս հարցը մշտապէս ներկայ պիտի ըլլայ: Եթէ խօսքերով չենք արձագանքէր, ապա մեր գործողութիւնները կը մատնեն մեր պատասխանը:

«Ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Տէր Յիսուսը ոչ միայն եկաւ որպէս Աստուծոյ Օծեալը, այլեւ որպէսզի դառնայ մեր Փրկիչը: Իրականութեան մէջ Յիսուս անունը կը նշանակէ «Եհովան Փրկիչ է»:

Մենք Փրկչի կարիք ունինք: Ինչո՞ւ: Մեր անցեալի եւ ներկայի մեղքերուն պատճառով: Ան եկաւ որպէսզի փրկէ մեզ մեր մեղքերէն եւ յոյս ու ուրախութիւն պարգեւէ: Ան եկաւ մեր հոգիները վերականգնելու եւ Իր մէջ մեզ նոր ընելու:

Մինչ Մարիամը նստած էր Յիսուսի ոտքերուն քով ու կը լսէր Անոր խօսքերը, Մարթան մտահոգուած էր ճաշի նախապատրաստական աշխատանքներով: Ան մօտեցաւ Յիսուսին ու ըսաւ. «Տէ՛ր, քու հոգը չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ թողուց սպասաւորութեան մէջ. ուստի ատոր ըսէ՛, որ ինձի օգնէ»: Յիսուսը պատասխանեց. «Մարթա՛, Մարթա՛, դուն շատ բաներու համար հոգ ընելով կը տագնապիս. բայց մէկ բան պէտք է եւ Մարիամ այն աղէկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի»:

Երբեմն շատ խնդիրներով կը մտահոգուինք եւ ժամանակ չենք ունենար մեր կեանքի ամենակարեւոր բանին: Կը խորհինք թէ, եթէ օգնենք աղքատներուն եւ աղօթենք մեր կարիքներուն համար, մենք լաւ քրիս-

տոնեայ կ'ըլլանք: Կը մտածենք թէ, եթէ ջանք թափենք եւ կիրակի օրերը եկեղեցի երթանք եւ առողջութիւն խնդրենք, ապա այս բոլորը մեզի ընդունելի կը դարձնէ Անոր առջեւ: Սակայն Յիսուսը ATM գործիք չէ: Յիսուսը ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքն է. մէկը Հօրը քով չի գար, բացի Իրմով (Յովհ. 14:6):

Ե՞րբ էր վերջին անգամ, որ լռութեանդ մէջ արձագանքեցիք «Ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ» հարցին: Դուք ստիպուած էք պատասխանել, այլապէս ձեր գործողութիւնները պիտի մատնեն ձեզ:

Թովմասը ըսաւ. «Իմ Տէրս եւ իմ Աստուածս» (Յովհ. 20:28) ու ծունկի եկաւ: Երբ Յիսուսի քով կուգանք՝ զինք այսպէս պետք է ճանչնանք: Այնուհետեւ կը սկսինք երկրպագել զինք: Մենք պետք է արձագանքենք այդ հարցին նախքան զինք երկրպագել սկսելը:

Դուք կրնաք երկիւղ ունենալ կամ յարգել զինք եւ ընել այն, ինչ Իրեն է հաճելի, բայց եթէ ապաշխարութեամբ չդիմէք Փրկչին, եթէ Իրեն ձեր կեանքի Տէրն ու Թագաւորը չդարձնէք, եթէ Իրեն չդիմէք ըսելով. «Իմ Տէրս եւ իմ Աստուածս», ապա ձեր կեանքը չի փոխուիր:

«Աստուած Հոգի է եւ իրեն երկրպագողներն ալ պետք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն» (Յովհ. 4:24):

Իմ աղօթքս է, որ այդ հարցին հիմա և այստեղ պատասխանէք, որպէսզի Ան կարողանայ ձեզ ուրախութիւն եւ խաղաղութիւն պարգեւել: Յիսուսը թողեց Երկինքի փառքը, մարդկային կերպարանք առաւ, բոլորի կողմէ ատուեցաւ եւ խաչի վրայ մահացաւ ողջ մարդկութեան փրկութեան համար: Չեր պատասխանը ձեզի դէմ պիտի վկայէ, քանի որ եթէ մերժէք զինք, ապա ինքներդ ձեզ դատապարտած կ'ըլլաք:

Հ. Գ.



«Ուստի ստուծիւնը մէկդի ձգելով՝ ճշմարտութիւնը խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին, վասն զի մենք իրարու անդամներ ենք: Եթէ բարկանաք՝ մեղք մի՛ գործէք, արեւը ձեր բարկութեանը վրայ մարը թող չմտնէ: Ու Սատանային՝ տեղի մի՛ տաք» (Եփես. 4:25-27):

Յաւերժացուցէ՛ք պահը

Գունաւոր լուսանկարներու տպագրութեան գովազդները շատ տեղին են: Մենք բոլորս մեր կեանքին մէջ ունինք այնպիսի պահեր, որոնք կ'ուզենք լուսանկարել ու յաւերժ պահել: Ատոնք կարող են տարբեր տեսակի առիթներ ըլլալ, սկսած ծովափին ընտանեկան հանգիստէն մինչեւ հոգեւոր կեանքի ընթացքին յիշարժան մէկ փորձառութիւն: Անկախ, թէ մեր յիշողութիւնները ժապաւէնի վրայ կը պահենք թէ մեր սրտին մէջ, նպատակը նոյնն է: Մենք պարզապէս ինչ որ կերպով կ'ուզենք պահել փորձառութիւնը, որպէսզի աւելի ուշ կարողանանք վերյիշել այն եւ վայելել ատոր պատճառած ուրախութեան զգացումը:

Այնուամենայնիւ մենք շատ խնդիրներու կը սկսինք բախտիլ, երբ կը շփոթենք անցեալը յիշելու եւ անցեալով ապրելու միջեւ եղած տարբերութիւնը: Երբ Իսրայէլի ժողովուրդը կը մոռնար անցեալի մէջ Աստուծոյ ցուցաբերած հաւատարմութիւնը, մարգարէները յաճախ կը յիշեցնէին անոնց իրենց տրուած հոգեւոր կանոնները, որոնցմով պէտք է ապրէին: Բայց անոնք նաեւ հասկցան, որ անցեալին կարչելը եւ անցեալի օրհնութիւններով ապրիլը իրենց երբեք չօգնէ հասնելու այն ինչ կը փնտռէին:

Ես անշուշտ չկարողացայ հաշուել քննարկումներու քանակը, որոնց անձամբ մասնակցած եմ, կամ պարզապէս լսած եմ, թէ որքան լաւ կամ վատ էր եկեղեցական այս կամ այն ժողովը: Պէտք է խոստովանինք, որ առաւօտեան պաշտամունքի յաջողութիւնը կամ ձախողութիւնը կիւրակի կէսօրուայ ճաշի քննարկման նիւթ կը հանդիսանայ շատերու համար: Հետաքրքրական է, թէ ինչպէս են այս գրոյցները ժողովներու ձեւաչափը վերանայելու կամ այլ նմանատիպ հարցերու շուրջ մտածելու դուռ կը բանան: Կարծես թէ կը խորհինք, թէ կայ բանաձեւ մը, որը եթէ գտնենք ինչ-որ կերպ անցեալի ծառայութիւններու կամ փորձառութիւններու օրհնութիւնը պիտի կարողանանք ապահովել մեր եկեղեցիներէն ներս:

Մեր անձնական կեանքին մէջ նոյնպէս նոյն պայքարին կը հանդիպինք: Կը տեսնենք ամէնօրեայ հոգեւոր խորհրդածութիւններու նոր գիրք մը, ու կը խորհինք թէ եթէ այն կարդանք, ապա մեր հոգեւոր

կեանքը զարթօնք պիտի վերապրի: Սակայն շատ չանցած կը յայտնաբերենք որ այդպէս չէ, մենք նոյն դատարկութեան ու ձանձրոյթի մէջ ենք, որմէ կը փախչէինք: Կը թուայ թէ բանաձեւը կամ հմտութիւնը գտնելու ջանքերը ապարդիւն են, որոնցով պիտի կարողանանք վերակենդանացնել վաղեմի փորձառութիւններն ու օրհնութիւնները:

Մինչ Եբրայեցիները Մովսէսի առաջնորդութեամբ անապատի միջով Աւետեաց երկիրը կ'երթային, Աստուած ամէն օր հրաշքով կը կերակրէր անոնց (Ելից 16.14-20): Մէկ օրուայ մէջ հաւաքած կերակուրը պէտք չէ պահուէր միւս օրուան համար: Անոնք որոնք փորձեցին մանանան յաջորդ օրուայ համար պահել, տեսան որ առաւօտեան այն որդնոտած էր: Անկախ թէ ինչպիսի բանաձեւի կամ միջոցի դիմած էին, անոնք չկարողացան ապրիլ երէկուայ կերակուրով: Անոնք կրնային յիշել Աստուծոյ օրհնութիւնն ու նախախնամութիւնը, սակայն չէին կրնար դիմել այդ փորձառութեանը եւ ատորմով ապրիլ: Կը տեսնէ՞ք, օրհնութիւնը բանաձեւի մէջ չէ: Իրականութեան մէջ օրհնութիւն փնտռելը մեզի միշտ հիասթափութեան կը հասցնէ: Աստուած է օրհնութիւնը: Աստուած անցեալով չ'ապրիր: Անոր անունը «Ես եմ» է: Նկատեցի՞ք ներկայ ժամանակաձեւը: Հետեաբար, մենք չենք կրնար Իրեն հանդիպիլ անցեալին մէջ, քանի որ Նա այնտեղ չէ: Մեզ համար Ան միշտ ներկայ է:

Առիթով մը Ս. Լուիսը ըսած է, որ Աստուած այնքան իրայատուկ է, որ երբեք Ինքն Իրեն չի կրկնէր: Աստուածաբանները կը սիրեն վիճաբանիլ այս նիւթի շուրջ:

Աստուած մեզի կոչ կ'ընէ երախտապարտ սրտով յիշել անցեալի Իր հաւատարմութիւնները: Այնուամենայնիւ, անցեալի մէջ ապրելու փոխարէն, մենք պէտք է առաջ շարժուինք եւ ձգտենք փնտռել ոչ միայն անցեալի օրհնութեան յիշողութիւնները, այլեւ կենդանի Աստուծոյն: Երբ եկեղեցական պաշտամունքի կը մասնակցինք, կամ անձնական մենիկ պահ կունենանք, կամ առօրեայ կեանքին մէջ որեւէ իրավիճակի կը բախուինք, մենք պէտք չէ փորձենք վերապրել անցեալի օրհնութիւնները: Մենք ոչ թէ օրհնութիւնը կը փնտռենք, այլ Աստուծոյ:

Ինչպէս Եբրայեցիները՝ անապատին մէջ, մեզմէ հաւատք կը պահանջէ երէկուայ օրհնութիւնները բաց թողելու եւ ամէն օր դատարկ ամանով Աստուծոյ մօտենալու: Կենդանի Աստուած ներկայ է, Ան է

այն ամէնը ինչի կարիքն ունինք: Սա է այն հաւատքը, որը իսկապէս յիշարժան է:

Աստուած անցեալին մէջ չէ: Ան յաւիտենապէս կ'ապրի ներկայի մէջ, եւ այս ներկայ պահին է, որ կը հանդիպինք Իրեն ու կը շարունակենք ապրիլ Իր ներկայութեան մէջ:

Ռէքս Տիրլավ

Եթէ հիմա գար Յիսուս

Եթէ հիմա գար Յիսուս, եւ միտքս գտնէր շատ մը գեղեցիկ խորհուրդներով ու ծրագիրներով լեցուն, որոնց մէջ Ինք որեւէ մաս ու բաժին չունի, ի՞նչ պիտի ըսէր ինձի:

Եթէ հիմա գար Յիսուս, եւ սերս գտնէր շատ պաղ Իրեն հանդէպ, նաեւ հաւատքս տկար եւ թոյլ, Իրեն չսպասող, անհոգ ու անտարբեր վիճակի մէջ, ի՞նչ պիտի ըսէր ինձի:

Եթէ հիմա գար Յիսուս, եւ զիս գտնէր անձնասէր, այնպէս որ որեւէ մէկուն չեմ պատմած Իրեն եւ փրկութեան մասին, որուն քիրատր օրհնութիւնները վայելած եմ, ի՞նչ պիտի ըսէր ինձի:

Եթէ հիմա գար Յիսուս, եւ զիս գտնէր անհաշտ քինախնդիր հաւատացեալներու եւ մեղաւորներու հետ, ի՞նչ պիտի ըսէր ինձի:

Եթէ հիմա գար Յիսուս, եւ զիս գտնէր անհաւատարիմ, քնացած, ճրագս մարած, ծառայակիցներու հետ կռուող, սիրտս կերուխումով ու զինովութիւնով եւ աշխարհային զբաղմունքներով ծանրացած վիճակի մէջ, ի՞նչ պիտի ըսէր ինձի:

Եթէ հիմա գար Յիսուս, ուրախ պիտի ըլլա՞ր ինձի համար, թէ ես արթուն եւ Հոգիով լեցուն կեանք մը ապրած եմ Իր շնորհքով, զԻնք դաւանած եմ մարդոց առջեւ եւ զԻնք փառաւորած եմ խօսքով, կեանքով ու վարմունքով: Այն ատեն պիտի ըսէր. «Ապրի՛ս, բարի ու հաւատարիմ ծառայ, դուն որ քիչ բանի մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ, մտիր քու Տէրոջ ուրախութեանը մէջ» (Մատթ. 25:23):

Ղովտի ընտրութիւնը

Կարդացէ՛ք Ծննդոց 13-րդ գլուխը

Աբրահամն ու Ղովտը Եգիպտոսէն վերադարձան այնտեղ, որտեղ առաջ կը գտնուէին: Շատ ժամանակ չանցած երկու տղամարդկանց տարբեր առաջնահերթութիւնները ի յայտ եկան:

Աբրահամը Եգիպտոսէն վերադարձաւ եւ գնաց Քանանի հարաւային կողմը: Մեր ուշադրութիւնը կը գրաւէ այն փաստը, որ ան վերադարձաւ Բեթէլ՝ այն վայրը, որտեղ իր վրանը բացած էր սկիզբը, այն վայրը, որտեղ գոհասեղան պատրաստած էր: Թէեւ յայտնի չէ մեզ, սակայն կ'ենթադրենք թէ Աբրահամը Եգիպտոսի մէջ գոհասեղան չէր կառուցած: Այժմ ան վերադարձաւ այնտեղ, որտեղ կը պատկանէր: Կարեւորն այն էր, որ Աբրահամը սկսաւ նորէն երկրպագել Տէրոջը այն ձեւով, որը կը նշանակէր, որ ան Աստուծոյ հաւատարիմ ծառան էր: Ան կանչեց Տէրոջ անունը:

Սակայն շուտով խնդիր մը առաջացաւ: Աբրահամը չափազանց հարուստ էր, բայց Ղովտը նոյնպէս ունէր հսկայական հօտեր եւ արջարներ: Իրար հետ համերաշխ ապրելը երթալէն կը դժուարանար, ոչ թէ այն պատճառով որ իրենք իրար մէջ խնդիրներ ունէին, այլ իրենց հովիւներու միջեւ եղած լարուածութեան պատճառով: Երկուքի համար բաւականաչափ արօտավայր չկար, որպէսզի իրար մօտ ապրէին: Ուստի ստիպուած էին իրարմէ բաժնուիլ եւ տարբեր ուղիներով երթալ: Հարցը անելի վատթարացաւ այս տարածքին մէջ գտնուող Քանանացիներու եւ Փերեզացիներու ներկայութեան պատճառով: Հեթանոսներու աչքի առջեւ ճշմարիտ Աստուծոյ հետեւորդներու վէճը վատ վկայութիւն պիտի ըլլար եւ անոնք Աբրահամի երկրպագած Աստուծոյ մասին վատ կարծիք պիտի կազմէին: Լաւ վկայութիւն ձգելը եւ ընտանեկան համերաշխութիւն պահպանելը իրարմէ բաժնուիլը ոչ միայն ցանկալի դարձուցին, այլեւ անհրաժեշտութիւն:

Աբրահամը տարիքով մեծ ըլլալով իրատունք ունէր առաջինը որոշելու, թէ որ կողմը երթար: Այնուամենայնիւ կը տեսնենք, որ իր եղբօր որդիին շատ բարեացակամ առաջարկ մը կ'ընէ: Ան այդպէս որոշեց ընել,

որպէսզի ցոյց տայ, որ ընտանիքներու միջեւ որեւէ վիճաբանութիւն չկար: Ան Դովտին առաջարկեց առաջինը ընտրել: Եթէ Դովտը որոշէր ձախ կողմը երթալ, Աբրահամը կ'երթար աջ, իսկ եթէ որոշէր աջ կողմը երթալ, Աբրահամը կ'երթար ձախ:

Դովտը կատարեց իր ընտրութիւնը: Դովտէն այն տպաւորութիւնը չենք ստանար, որ ան պատրաստ էր շիամաձայնելու հօրեղբօր ըսածին: Դովտը աչքերը վեր վերցուց ու Յորդանանի ամէն կողմը նայեցաւ: Աբրահամը Եգիպտոսը թողած էր թէ՛ ֆիզիկապէս եւ թէ հոգեւորապէս, սակայն Դովտի առաջնահերթութիւնները տարբեր էր: Ան Յորդանանի կողմը նայեցաւ ու տեսաւ որ ամէն տեղ ջրաբքի էր ու հաճելի, Տէրոջը դրախտին կամ Եգիպտոսի երկրին պէս էր:

Թէ ինչ գիտեր Դովտը Տէրոջ դրախտի մասին կարելի է պարզապէս ենթադրել, բայց ան անշուշտ գիտեր Եգիպտոսի մասին եւ թէ որքան բարեբեր էր այդ տարածքը: Իր սրտին մէջ ան տակաւին այնտեղ էր, եւ ասիկա այդպիսի տարածքի մէջ ապրելու ոսկէ առիթ էր: Առանց իր հոգեւոր բարօրութեան մասին մտածելու, Դովտն ընտրեց Յորդանանի հովիտը եւ դէպի արեւելք չուեց: Աբրահամն ու Դովտը իրարմէ բաժնուեցան: Աբրահամը շարունակեց ապրիլ Քանանի երկրին մէջ, բայց Դովտը դաշտի քաղաքներուն մէջ բնակեցաւ: Յավոք սրտի, ան ոչ միայն տեղափոխուեցաւ Յորդանանի հովիտը, այլեւ շատ չանցած իր վրանը բացաւ Սոդոմի քով: Այնտեղ ան հոգեւորապէս իյնալու վտանգի առաջ էր: Շատ չանցած կը տեսնենք, որ ան սկսաւ ապրիլ քաղաքին մէջ:

Ծննդոց գրքի հեղինակը կարծես թէ կ'ուզէ ըսել, թէ Դովտը շատ լաւ գիտեր ուր կ'երթար: Սոդոմի մարդիկը խիստ չար ու մեղաւոր էին Տէրոջը առջեւ: Պետրոսը կ'ըսէ, թէ Դովտը անօրէններուն անառակ վարքէն ձանձրացեր էր (Բ Պետ. 2:7): Եթէ Դովտը Տէրոջ համար կ'ուզէր լաւ վկայութիւն պահպանել, ապա ան սխալ ճամբու վրայ էր: Այս փուլի մէջ կատարուած սխալ ընտրութիւնը հիմք հանդիսացաւ ապագայի աղէտին:

Այս բոլորէն կարելի է մի քանի հարց առաջ քաշել: Ընտրութիւն կատարելու ժամանակ ի՞նչ սկզբունքներու կը հետեւինք: Որո՞նք են մեր կեանքի առաջնահերթութիւնները: Արդեօ՞ք կը գիտակցինք սխալ ընտրութեան հետեւանքները:

Ընտրութեան ժամանակ արդեօք միայն նիւթակա՞ն առաւելութիւններուն ուշադրութիւն կը դարձնենք: Այսինքն՝ միայն այս կեանքի բանե՞րը կը փնտռենք: Մենք պէտք է գիտակցինք, որ կան նաեւ յաւիտեանական արժէքներ: Մենք այստեղ չենք ապրիր ներկայ նիւթական առաւելութիւնները վայելելու համար, այլ կ'ապրինք մեր Տէրոջը փառաւորելու համար: Շատ կարեւոր է Տէրոջը կամքը փնտռել, երբ երկու կամ աւելի այլընտրանքներու առջեւ կանգնած ենք: Այդ ժամանակ պէտք է ընտրել այն ճամբան, որու մէջ Տէրոջը պիտի կարողանանք լավագոյն կերպով ծառայել:

Մա անկասկած կը նշանակէ, որ պէտք է աղօթքով ժամանակ տրամադրել քննելու տարբերակները ու Տէրոջը խնդրելու ցոյց տալ, թէ որ ճամբով կ'ուզէ երթանք: Եւ Ան ցոյց կուտայ: Հնարատր է այնպիսի հանգամանքներ մէջտեղ բերէ, որոնցմով կը հասկնանք Իր ուզած ճամբան: Կ'ակնկալենք, որ Աստուած մեզի ներքին խաղաղութիւն տայ: Եւ երբ Աստուծոյ ծրագիրը յայտնի ըլլայ, մենք այդ ճամբով վստահութեամբ կը սկսինք ընթանալ:

Ըստ էութեան Աբրահամը ընտրութիւնը Տէրոջը ձգեց: Դովտի գատուելէն ետք Տէրը Աբրահամին ըսաւ, որ աչքերը վեր վերցնէ եւ իր եղած տեղէն դէպի հիւսիս ու հարաւ եւ դէպի արեւելք ու արեւմուտք դիտէ: Աստուած ընդարձակեց այն խոստումը, որը տուած էր Աբրահամին, ըսելով թէ իր տեսած այդ ամբողջ երկիրը իրեն եւ իր սերունդին պիտի տար յաւիտեան: Աստուած նաեւ աւելցուց ըսելով, թէ Աբրահամի սերունդը երկրի փոշիին պէս անթիւ պիտի ընէր, այնպէս որ եթէ մէկը երկրի փոշին կարենայ համրել, իր սերունդն ալ համրէ: Այնուհետեւ Աբրահամին ըսուեցաւ, որ երկիրը պտղտի անոր երկայնութեանը ու լայնութեանը համեմատ, քանի որ զանիկա իրեն պիտի տար:

Այստեղ հիանալի միտք կայ: Աբրահամը վերադարձաւ այնտեղ, որտեղ միշտ պէտք է գտնուէր, այսինքն՝ Տէրոջ ներկայութեան մէջ: Ան այժմ գիտէր, որ Աստուած հոգ պիտի տանի իրեն եւ Իր որոշած ժամանակին այդ երկիրը պիտի պատկանի իր ժառանգներուն: Այս վրստահութեամբ ան իր վրանը վերցուց ու գնաց բնակեցաւ Մամբրէի կողմններուն մէջ, որ Քեբրոնի մէջ է եւ հոն սեղան շինեց Տէրոջը:

Տոն Սթորմըր

Աստուծոյ արդարութիւնը

Ղուկաս 18:1-8

Աստուծոյ հաւատացողին ամենէն մեծ յուսախաբութիւնը զգալն է, որ Աստուած իր աղօթքը չի լսէր, կամ անոր չի պատասխաներ: Բաւարար չէ՞, որ մեր շուրջ գտնուող անձերը մեր ձայնը չլսեն ու մեզի պատասխան չտան, Աստուած ալ չլսէ... մեծ յուսախաբութիւն:

Երբ անարդար խօսքերու ու գործերու զոհը դառնանք, կամ մեր տունը գողցուի, մեր ընտանիքը անարգուի, կամ մեր իրաւունքները խլուին, եւ մարդիկ, ականատեսներ ձայն չհանեն, Աստուծմէ արդարութիւն պահանջենք եւ տակաւին զգանք որ արագ լուծում մը չի տրուիր, պիտի կարծենք որ Աստուած մեր կողմէն չէ, Աստուած չի լսէր, Անոր հոգը չէ, կամ թէ Աստուած ներկայ չէ: Փորձութեան վիճակ է այս, երբ կարծենք որ Աստուծոյ մեծութիւնը կամ Աստուծոյ սէրը մեր ուզած ձեւով եւ մեր ուզած ժամանակ կրնանք չափել:

Ամէն անգամ երբ Աստուծոյ կ'աղօթենք եւ պատասխան կը սպասենք, կ'ուզենք որ Աստուած ճիշդ մեր ուզած ձեւով պատասխանէ, եւ եթէ Աստուած տարբեր ձեւով պատասխանէ պիտի կարծենք որ Ան բնաւ պատասխան չտուաւ: Հաւատացեալին ամենէն կարեւոր պէտքերէն մէկը Աստուծոյ ձայնին վարժուիլն է – Իր Խօսքով, Իր Հոգիով, Իր զաւակներով, կեանքի պարագաներով եւ անձնական փորձառութիւններով:

Ղուկաս աւետարանիչ՝ իր ամուսինը կորսնցուցած կնկան մը՝ որբ-եայրիի մը օրինակը կը ներկայացնէ այս հատուածին մէջ, որպէսզի բացատրէ թէ Աստուած որքան գթացող Աստուած է: Իսկ այս հատուածը ինչո՞ւ գրուած է, որովհետեւ շատ քրիստոնյաներ Յիսուսի ժամանակ, եւ մեր ժամանակի ալ եթէ տեսնէին թէ Աստուած անարդարութիւն կատարողը անմիջապէս չէր պատժէր, Աստուծոյ արդարութեան մասին կասկածով կը խօսէին: Մարդիկ կը ջանային Աստուծոյ պայմաններ տալ եւ զԱստուած փորձել – եթէ արդար ես իմ ուզած ժամանակս, ուզած ձեւովս միջամտէ:

Պատմութիւնը դատաւորի մը մասին է, որ արդարութիւն կատարելու

համար պաշտօն ստանձնած է – դատաւոր, մէկը որ կրնայ շիտակը սխալէն եւ արդարը անարդարէն զանազանել, ըստ օրէնքին – սակայն այս դատաւորը իր պաշտօնին հաւատարիմ չէր, այսինքն՝ արդարութիւն կատարելը իր հոգը չէ (2-րդ համարին մէջ կ'ըսէ թէ ան Աստուծոմէ չէր վախնար ու մարդոցմէ չէր ամչնար):

Եւ ահաւասիկ կուգայ կին մը՝ որբեւայրի, եւ ամէն օր դուռը կը զարնէ դատաւորին՝ խնդրելով որ իրեն իրաւունք տրուի, եւ ուրախ ենք որ ի վերջոյ, դատաւորը այս կինէն յոգնելով իրաւունք կուտայ:

Այս պատմութիւնը կարդացողը կրնայ ըսել, ուրեմն, մենք ալ այս որբեւայրիին նման մեր իրաւունքէն չհրաժարինք, դուռեր զարնենք, եւ կամ կրնանք սորվիլ որ եթէ անդադար աղօթենք զԱստուծոմ կրնանք համոզել, որ մեր կամքին ենթարկուի: Սակայն ո՛չ, այսօրուան դատը Աստուծոյ արդարութեան եւ այս անաստուած դատաւորին կատարածի արդարութեան տարբերութիւնն է:

Ճիշդ է, որ դատաւորը որբեւայրիին իրաւունքը կուտայ, արդարութիւն կ'ընէ, սակայն տակաւին կը մնայ անարադար, որովհետեւ արդարութիւնը իր անձնական շահուն համար կը գործէ ոչ թէ արդարութեան սիրոյն:

Այս դատաւորը իրաւունք կ'ընէ ոչ թէ արդար ըլլալու համար, ապա իր անձնական հանգիստին համար, որպէսզի անգամ մըն ալ որբեւայրի կինը իր դուրը զարնելով իր գլուխը չցաւցնէ:

Այսինքն դատաւորը որո՞ւն դատը կը պաշտպանէ, որբեւայրի՞ին, թէ՞ իր անձին դատը: Որբեւայրիինը՝ միայն երբ ինք ալ անոր մէջ շահ գտնէ:

Դատաւորը շատ լաւ գիտէ, թէ իր այրը կորսնցուցած կին մը՝ որուն հողը, տունը, զաւակը կամ ուրախութիւնը կրնան իրմէ խլուած ըլլալ, ուրիշներէ աւելի պէտք ունի իր իրաւունքները ստանալու, սակայն դատաւորը՝ քարացած սրտով ռեւէ անձնասէր ու կարճատես անձի նման չի համոզուիր որ պարտական է կնկան դատը տեսնել: Իր մէկ գիշերուան հանգիստին համար սակայն, պատրաստ է կնկան իր պահանջուածը տալու: Նոյնն է պարագան քաղաքական ընտրութիւններու ժամանակ... օրինակ՝ քաղաքական մարդիկ հայկական հարցին մասին շատ աւելի կը խօսին այն նահանգներուն եւ քաղաքներուն մէջ, ուր

հայերը կը բնակին, ո՛չ որովհետեւ արդարութեան գործերով հետաքրքրուած են, հապա որովհետեւ հայոց քուէին պէտք ունին:

Ի՛նչ արդարութիւն է այն՝ որ քուէով կամ դրամով կը գնուի: Ի՛նչ իրաւունք է այն՝ որ գիշերուան մը հանգիստի խոստումով կը ստացուի: Ո՞ր է արդարութիւնը այն դատաւորին, որ Աստուծմէ չի վախնար ու մարդոցմէ չամչնար: Երբ դատաւոր մը օրէնքներուն օրէնքը եւ ամէն օրէնքի օրէնադիրը չի ճանչնար, եւ երբ ան իր պաշտօնին ետին պահուած կը մնայ, ինչպէ՞ս կարելի է որ ան արդար ըլլայ: Այնպիսի դատաւոր մը կրնայ ժամանակէ ժամանակ իր տրամադրութեան կամ շահուն համեմատ իրաւունք ընել եւ արդարութիւն գործել, բայց բնաւ արդար մը չի կրնար ըլլալ ան, ռովհետեւ Հռովմ. 5:14-էն գիտենք, որ մարդ հաւատքով կ'արդարանայ Աստուծոյ ու մարդոց հետ, եւ ինքզինքին հետ խաղաղութիւն կունենայ:

Կայ նաեւ Աստուծոյ արդարութիւնը: Աստուած արդարութիւնը ժողովուրդին դրամին, քուէին, պատուելուն չի նայիր: Աստուծոյ արդարութիւնը պարզապէս իրաւունք տալու կամ ստանալու վրայ հիմնուած չէ, այլ՝ Աստուծոյ սիրոյն վրայ, այն սիրոյն վրայ որ մարդկութիւնը պատժելու փոխարէն Իր Միածինը որկեց մարդոց համար եւ Իր աստուածային իրաւունքը մոռցաւ: Աստուած նախընտրեց, որ մարդիկ արդարանան իր առջեւ քան թէ ինք անոնցմէ իրաւունք պահանջէ: Ուրեմն Աստուած պարզապէս իրաւունքներուն Աստուած չէ, հապա արդարութեան Աստուած է: Մեզ օրէնքին ենթարկելու փոխարէն, օրէնքը ստեղծողին հետ կը հաշտեցնէ եւ խաղաղութիւն կը ստեղծէ:

Աստուծոյ արդարութիւնը կրնայ մեր նախընտրած յստակութեամբ, ուզած ժամուն եւ երազած ձեւով չյայտնուիլ, բայց կը հաւատանք որ երբ Որդին Մարդոյ գայ եւ մեր հոգիները յախտենապէս գրկէ, այն ատեն պիտի տեսնենք արդարութեան իսկական դէմքը, եւ այն ատեն ա՛լ աւելի պիտի համոտեսենք արդարութեան պտուղները: Մինչ այդ մեզի կը մնայ հաւատքը պահել, որբեւայրիին իրաւունքը տալ, անօրին կերակրել, մեր դրացին պատուել, մեր ժողովուրդին ծառայել, մեր կարողութեան չափով մեր իրաւունքին հետ ուրիշներուն իրաւունքն ալ պաշտպանել հետեւելով երկնային արդար դատաւորին, ո՛չ թէ երկրային պատեհապաշտ դատաւորին:

Պատ. Փօլ Հայտօսեան

Փոխարինուած խաչը

«Շատ դիրին է մեր հակառակորդները արհամարհել եւ բոլորը դատապարտել առանց բացառութեան: Երբ այդպէս ընել կը փորձուիմ», կ'ըսէ վեթերան ծովակալը, «կը յիշեմ երկար տարիներ առաջ, Հիւսիսային Վիեթնամի մէջ պատերազմական բանտարկեալ եղած ատենս պատահած անմոռանալի դէպք մը»:

Բանտին մէջ դրացի բանտարկեալներու հետ հաղորդակցուելու միակ միջոցը ծածկագիրով իրարու հետ խօսիլ էր: Այդ խօսակցութիւնները միշտ կը վերջանային Ա.Օ.Ք. (Աստուած օրհնէ քեզ) թակելով: Սակայն եկեղեցական պաշտամունք եւ կրօնական որեւէ նշան արգիւտուած էր: Ես եղեգի ճիւղերով շինուած պզտիկ խաչ մը ունէի, որ բանտարկեալ բարեկամ մը շինած էր ինծի համար՝ ինքզինք մեծ վտանգի տակ դնելով: Գիտէի որ Վիեթնամցի պահակները բնաւ պիտի չարտօնէին, որ այդ խաչը ունենամ, անոր համար շահադիտական սփռումային գրքոյկի մը մէջ պահած էի զայն: Յերեկները գրքոյկը անկողինիս տակ կը պահէի, իսկ գիշերները խաչը ձեռքիս մէջ բռնած կ'աղօթէի, որովհետեւ այդպէս ընելով հոգեկան մեծ խաղաղութիւն կը զգայի: Քանի մը ամիս ետք լսեցի անոր յաղթական քրքիջը: Ան խաչս գտած էր: Դուրս գալով, աչքիս առջեւ կտոր կտոր ըրաւ զայն եւ բաց կոյուղիին մէջ նետեց: Շատ զարյացած էի, բայց անօգնական: Վիեթնամցի տարեց բանուորները կը դիտէին պատահածը: Պահակը հրահանգեց որ իմ խուցիս մէջ աշխատին: Կէս ժամ ետք գործը ամբողջացած ըլլալով, ես իմ խուցս վերադարձայ: Անմիջապէս անկողինիս տակ նայեցայ եւ գտայ պրոպականտայի գրքոյկը եւ բարկութենէս սկսայ պատրուտել զայն: Մէյ մըն ալ զգացի, որ հաստ բան մը կար էջերուն մէջ պահուած: Խաչ մըն էր: Բացայայտ էր, որ Վիեթնամցի բանուորներուն գործն էր այդ: Սարսռացի երբ մտածեցի այն ահռելի պատիժին մասին որուն կրնային ենթարկուիլ անոնք, եթէ բռնուէին:

Այդ գիշեր մինչ նոր խաչս բռնած կ'աղօթէի, անդրադարձայ ուրիշ ճշմարտութեան մը, որ ինծի շատ ատելի հոգեկան խաղաղութիւն եւ յոյս ներշնչեց սպազային նկատմամբ: Հակառակ տարբեր կառավարութիւններու որդեգրած կուսակցավարութիւններուն, որոնք թշնամիներ

կը դարձնեն անձանօթ մարդիկ, Աստուծոյ գերբնական սէրը կրնայ մեզ Քրիստոսով եղբայրներ ընել»: «Վասն զի դուք ամէնդ ալ մէկ էք Քրիստոս Յիսուսով» (Գաղ. 3:28):

Քաղուած՝ «Օրհնաբեր նոնենին» գրքէն

Արեւշատ գիւղը

Արեւշատ կը նշանակէ շատ արեւ, ան Հայաստանի փոքր գիւղերէն մէկն է: Մի քանի տարի առաջ այնտեղ այցելած էի կարիքատուր մի քանի ընտանիքներու համար աղօթելու: Ներս մտանք հսկայ սենեակի մը մէջ, որտեղ ոչինչ կար: Ոչ կահուք կար, ոչ ալ պատէն կախուած նկարներ: Սենեակն ունէր ընդամէնը մէկ պատուհան եւ մէկ դուռ: Երբ յաջորդ սենեակը ներս մտայ, այնտեղ դրուած էր չորս մահճակալներ, իւրաքանչիւրը մէկ անկիւնին դրուած:

Գիւղացին ամուսնացած էր եւ ունէր երկու հաշմանդամ դուստր: Մէկը, մօտաւորապէս քսան տարեկան էր եւ մանկութենէն ի վեր մտքի խանգարում ունէր, երբեք չէր քալած կամ որեւէ բանի արձագանքած: Ամբողջ օրը անկողնուն մէջ էր: Երկրորդ աղջիկը հաշմանդամ էր՝ սայլակի մէջ նստած, ով փոքր ինչ անհանգիստ տեսք ունէր:

Անոնց մայրը հրաժարած էր հոգ տանիլ հաշմանդամ դուստրերուն, եւ թողած էր տունը: Հայրը երկրորդ անգամ ամուսնացած էր եւ երկրորդ կինը սկսած էր հոգ տանիլ անոնց:

Հայրը սայլակին մէջ նստած աղջկան խնդրեց տալ իր վկայութիւնը: Ես շատ զարմացած էի, քանի որ չէի գիտեր, թէ ան կարող էր խօսիլ, առաւել եւս՝ վկայութիւն տալ: Ժպիտը դէմքին ինձի նայեցաւ ու հարցուց, թէ արդեօ՞ք կը ցանկանայի լսել իր վկայութիւնը:

Ամբողջ մարմինս փշաքաղուեցաւ, երբ ան սկսաւ շարադրել իր խօսքերը, որը այսպէս էր.

«Ծնուած օրէս ոչ ոք զիս չսիրեց, իսկ մայրս մանկութենէս ի վեր քեզ զիս: Ես այլեւս ապրիլ չէի ուզեր, մինչեւ որ լսեցի Յիսուսի սիրոյ մասին: Իմ ամբողջ կեանքս փոխուեցաւ: Ան իմ կեանքիս մէջ նոր ուրախութիւն եւ յոյս բերաւ: Ես Տէր Յիսուսէն մէկ բան կը խնդրեմ, ոչ թէ

որ զիս առողջացնէ ու ես կարողանամ քալել, այլ որ զիս լաւա-
ցընէ, որ կարողանամ ծունկի գալ ու Իրեն երկրպագել»:

Աչքերս արցունքոտուեցան, ոչ թէ իրենց գտնուած պայմաննե-
րուն համար, ոչ ալ իր իրավիճակի համար, այլ որովհետեւ զար-
մացայ Տէր Յիսուսի հանդէպ իր ունեցած հաւատքի վրայ: Տու-
նէս 12,000 քմ հեռադրութեան վրայ, Արեւշատ գիւղին մէջ, սկսե-
ցի զարմանալ, թէ ուրկէ ունէր ան այսպիսի հաւատք:

Տէրը հաւատարիմ է ու գթառատ: «Անհկա քու ոտքդ պիտի
չդողացնէ ու քու Պահապանդ պիտի չքնանայ»: Մենք թերեւս մոռ-
նանք աղքատներուն ու որբեայրիներուն, սակայն Անոր աչքերը
միշտ անոնց վրայ են:

Այո՛, մենք Հայաստան կ'այցելենք, որպէսզի Քրիստոսով քա-
ջալերենք այդ մարդկանց, սակայն շատ յաճախ անոնք մեզ կը
քաջալերեն ու կը զարմացնեն իրենց հաւատքով:

Յիշէ՛ք անոնց, որոնք կարիքի ու նեղութեան մէջ են եւ աղօթե-
ցէ՛ք անոնց համար: ACM-ն նուիրուած է Աւետարանը հասցնել
ամէնաաղքատիկ մարդկանց:

Հ. Գ.



Ասիկա ACM-ի «Անկիւնաքար» շէնքն է Կիւմրիի մէջ: Մեր աշխատակիցներն են՝ ծա-
խէն՝ Վաչէն ու Մանուշակը, Յամիկն ու Աշոտը, Մարտունն ու Սեժելան: Կը խնդրենք
աղօթել իրենց համար: